Մինչ զեկ բեկոի մակուկիս,
Մինչ պաշարեն յորձանք զիս.
Կամ շուրջ նիրհէ թէ անդորր
Գոյժ մրրկաց մռտաւոր.
Թէ հողմ գոգեալ զառագաստ
Սրարշաւ վարէ զիմ ըղլաստ,
Եա լի յուսով անխըլիրտ
Քեզ յառեալ զակն անքըթիթ՝
Սըրտիւ ի ծուփ անձկաւէտ
Եւ ի սիրոյն ցօղս յաւէտ
Կողկողեցայց միշտ առ քեզ,
Թէ զայս ինձ շնորհ առաքես,
Հառաչել յամայր
Ողջ լեր, Ցոյս եւ Մայր։

Հ. Խ. Գ.

---

# ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

## ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### Թէյ։

Ղինացւոց և Ճաբոնաց մէջ շատ յարգի է Թէյ ըսուած օգտակար թուփը, ինչպէս յայտնի կը ցուցընէ այս յետիններուն մէկ սրբազան աւանդութիւնը։ Ըստ Ճաբոնաց՝ Տարմա ըսուած շատ կրօնասէր արքայազն իշխանը, որ Հնդկաց Թագաւորներուն մէկուն երրորդ որդին էր, անցաւ 'ի Ղինաստան Քրիստոսի 510 թուականին, և ամենայն խնամքով ջանաց Ճշմարիտ Աստուծոյն և Ճշմարիտ կրօնից ծանօթութիւնը տարածել այն երկրին մէջ։ Ուզենալով՝ որ իր օրինակովը յորդորէ զամենքը ըսածներուն հետևելու, ամէն տեսակ մահացուցմունքներ ու ապաշխարութիւններ կ'ընէր, ինչպէս բացօթեայ տեղ կենալով և գիշեր ու ցորեկ աղօթից և մտածականի տալով զինքը։ Բայց ինչպէս եղաւ որ շատ տարիներէ ետքը սաստիկ տկարացած ըլլալուն աշխատութիւններէ՝ օր մը առանց իր ուզելուն քունը տարաւ։ Այրբոր արթընցաւ Տարմա, երդմունքէն պակսած սեպեց զինքը, և որպէս զի անկէ ետև անդուլ կատարէ իր տուած խոստմունքը՝ կտրեց արտևանունքն ու գետին նետեց։ Այրկրորդ օրը նոյն տեղն որ եկաւ, տեսաւ

Թէյ։

որ այն իր արտևանունքը փոխուեր նոր անծանօթ թուփ մը դարձեր են. կերաւ անոր տերևներէն, և զուարթութիւն մը ու իր առաջին ուժն ստացաւ։ Այն բանը իր աշակերտացն ու հետևողներուն ալ պատուիրելով՝ կամաց կամաց Թէյին յարգն աւելցաւ, իր ըրած օգտակար ազդեցութիւնները շատ պիտանի երևցան ամենուն, և անկէց ետև հասարակաց ըմպելիք մը եղաւ։

Թէյին օգտակարութիւնները մեզի անծանօթ ալ եղած ըլլային, բայց սակայն այդ ժողովրդական առասպելը բաւական էր ցուցընելու, որ Ղինաց և Ճաբոններու առջև Թէյը որթոյ ու ցորենի յարգն ունի, որոնց սկզբանը համար ալ հին հեթանոս ժողովուրդները հրաշալի բաներ կը պատմէին։ Ղգիտցուիր թէ երբ և ինչ պատճառներու համար սկսեր են Ղինք Թէյը

ջրոյ մէջ խաշած գործածել. բայց հաւանական կ'երևայ որ գլխաւորապէս իրենց աշխարհքին շատ մասերուն մէջ ջուրը աղի և անհամ ըլլալուն այս գործածութիւնը սկսեր են։ Սակայն ասոր վրայ տարակոյս չկայ, որ շատ հնուցմէ 'ի վեր կը մշակեն այդ թուփը Չինացիք և Ճապոնները։ Մանաւանդ թէյը իբրև ըմպելիք գործածելը շատ հին է Չինաստանի մէջ, և անանկ տարածուած է այս ընդարձակ երկրին ամէն աստիճանի բնակչացը մէջ, որ Ղրտ Մեգերդնի լաւ կ'ըսէ. "Թէ որ Եւրոպացիք թէյի վաճառականութիւնը դադրեցընէին ալ, 'ի վերայ այսր ամենայնի անոր գնոյն վերայ մեծ տարբերութիւն մը չէր ըլլար"։

Լինեկոս երկու տեսակ թէյ կը դնէ. Կանաչ և Թխագոյն Ռէյ. բայց շատ մատենագիրներ, որ այս տունկը իրեն բընիկ երկրին մէջը դիտեր են, և անոնց հետ հիմակուան բնապատումները կը հաստատեն թէ թէյը մէկ տեսակ մըն է միայն, և այն պզտիկ զանազանութիւններն որ կը գտնուին այլ և այլ արմատներու վրայ՝ երկրին, կլիմային, միակութեան ազդեցութիւններէն են։

Թէյին բարձրութիւնը չորսէն ինչուան երեսուն ոտք կը հասնի. արմատը շատ ճիւղեր կը բաժնուի. տերևները ոզորկ են, լերկ, կարծր, մթնագոյն կանաչ, ձուաձև, սրածայր, երկուքէն ինչուան չորս բթաչափ երկայն. պտուղը իրեք բոլորաձև կեղևներէ ձևացած է և մեծութիւնը կաղնոյ մը չափ. այս կեղևներուն իւրաքանչիւրին մէջ իւղալից դառն ու անախորժ սերմ մը կայ, որ շողիքը կը գրգռէ և ինչուան սիրտ ալ կը խառնէ։

Թէյը Չինաստանի հարաւային գաւառներուն բնիկ կ'երևայ. բայց ասոր միակութիւնը Գանդոնէն ինչուան Ռէքին տարածուած է, ուր քարոզչաց տուած ծանօթութիւններուն նայելով՝ ձմեռը Բարիզէ աւելի սառատիկ է[1]։

Չինացիք և Ճապոնք բացավայրի մէջ կը տնկեն թէյը, որ շատ կը սիրէ հարաւ նայող բարձրաւանդակներու զառ 'ի վայրն ու գետերու և առուակաց մերձակայ ափունքը։ Երբ նոր արմատները իրեք տարուան կ'ըլլան, կրնաս տերևները ժողվել. եօթը տարուան որ հասնին՝ քիչ տերև կու տան. այն ատեն արմատը կը յօտես, որ վարէն կը սկսի նորէն ծլիլ և առատութեամբ նոր նոր տերևներ կու տայ։

Թէյին տերևներուն ժողվելու եղանակն որ կու գայ, տեսնելու է միակաց ճարտարութիւնն ու արագութիւնը հնձոց ատեն. մէկիկ մէկիկ կը կտրեն այդ տերևները՝ մեծամեծ զգուշութիւններ ընելով, և այս կերպով օրուան մէջ չորսէն ինչուան տասը ունցս հինգ լիտր կը ժողվուի։ Ամենէն աւելի յարգի տերևներն են անոնք, որ Փետրուարի վերջերը կամ Մարտի սկիզբները կը ժողվեն. որովհետև այն ատեն տերևները դեռ փափուկ կ'ըլլան և բոլորովին բացուած չեն. ասոնցմէ շինուած թէյը կ'ըսուի Կայսերական Ռէյ, որ մեծամեծաց ու հարուստներու համար կը գործածուի։ Ամենէն վրայ ամիս մը անցնելէն ետև՝ երկրորդ հունձք մը կ'ընեն. այս անգամ անխտիր ամէն տերև կը կտրեն, և ետքը կ'ընտրեն, և իրենց ժամանակին, համեմատութեանն ու տեսակին յարմար կը կարգաւորեն։ Վերջապէս դարձեալ ամիս մը ետքը երրորդ և վերջին հունձք մ'ալ կ'ընեն, որ առաջիններէն առատ կ'ըլլայ, բայց այնչափ յարգ չունի։ Հնձոց վերջանալը կ'իմացընեն հասարակաց հանդէսներն ու զուարճութիւնները։

Ճապոնի մէջ թէյի պատրաստութեանը համար հասարակաց գործարաններ կան, և ով որ շինելու պատշաճ միջոցները չունի կամ կերպը չգիտեր՝ հոն կը տանի իր տերևները, երբոր կը սկսին չորանալ։ Հոն թարմ թարմ այն տերևները շատ լիտր միատեղ՝ բարակ, լայն և քիչ խոր երկաթէ վառարանի մը մէջ կը դնեն, զոր այս բանիս

[1] Անոր համար Գաղղիոյ հիւսիսային գաւառները չդիմանալուն պատճառն է՝ որ հոն ամառուան օդոյն զուգախառնութիւնը շատ բարձր չէ։

գործածուելու հնոցի մը կերպով տաք-ցուցած են։ Լոտքը կը սկսին շարժել տե-ղևները և ձեռքով անգադար կը դար-ձընեն, որպէս զի որչափ կարելի է ա-մենքը հաւասարապէս խորովին։ Տա-քութիւնը կորսնցընել կու տայ անոնց այն թմրեցուցիչ և փնասակար յատկու-թիւնն, որ իրենց բնական հիւթը կը հաղորդէ անոնց։ Լակ Ղինասատան խո-րովելէն առաջ մանրերկրորդ մը եռա-ցեալ ջրի մէջ կը թրջեն տերևները. ետքը վառարանի մէջ դնելէն և հանե-լէն վերջը՝ այլ և այլ անձանց կը բաժ-նեն, որոնք պրտուի[1] ամենաբարակ թելերովը հիւսուած գորգերու վրայ կը շփեն կը գալարեն իրենց ափովը. բայց այս աշխատութիւնը պէտք է որ արագութեամբ ըլլուի ինչուան տերև-ները պաղին. որովհետև տաք եղած ատենին միայն կը գալարին։ Տեսակ կայ որ ինչուան հինգ անգամ կը խորո-վեն և կը գալարեն տերևները, աստի-ճանաբար պակսեցընելով կրակին սաստ-կութիւնը. այս կերպով տերևները ա-ւելի լաւ կը պահեն իրենց կանաչ գոյնը, և դժուարաւ կ'աւրուին։

Մարմ Թէյը արբեցուցիչ յատկու-թիւն մը ունի, որ ջղերուն կը դպչի, և խորովելով ալ բոլորովին չկորսնցըներ. անոր համար Նաբոնք նոր Թէյ չեն խմեր՝ ինչուան որ նոյն չափով հին Թէյ չխառնեն մէջը։ Մէյին համար կ'ըսեն թէ միզարգելութիւնը կը բժշկէ ու կը գրգռէ մէզը, նմանապէս մարսողութե-կ'օգնէ. բայց ինչ որ ալ ըլլայ՝ ինչուան հիմա այսպիսի տունկ մը տեսնուած չէ, որուն խաշուն այսչափ յաձախութեամբ և ախորժով խմուի։ Ղինացիք շատ ա-ւողջարար կը սեպեն Թէյը, և զուտ զուտ կը խմեն՝ առանց շաքար կամ ու-րիշ բան խառնելու մէջը։ Բայց սակայն այս ալ յայտնի է, որ ամէն մարդու խառնուածքն չյարմարիր Թէյը. սո-վորական և օրըստօրեայ գործածու-թիւնն ունի իր օգուտներուն հետ վը-նասներ ալ. անոր համար այս պատ-ճառները տեսնելով՝ շատ լաւ է որ և իցէ կերպով տղոց, երիտասարդաց, և ընդհանուր փափուկ ստամքս ունեցող-ներու արգիլել Թէյը։

Հոլանտացիք եղան առաջինը, որ Թէյը Եւրոպիա մտուցին։ 1641ին Գուլբիուս անունով երևելի բժիշկն ու Ամդերտամի հիւպատը շատ գո-վեստներ տուաւ անոր լաւ յատկու-թեանցը վրայ. ինչպէս նաև 1657ին գաղղիացի բժիշկ մը. իսկ 1678 տա-ւրոյն Պրանտէպուրկայ կայսրընտրին բժիշկը՝ Պոուդեքօ, որ շատ մեծ անուն ունէր, մեծ եռանդեամբ իրեն օգտա-կարութեանցը վրայ գովեստ մը գրեց իր խահուէի, Թէյի և չիքոլատի վրայ հրատարակած ձառին մէջ. այս գը-ռուածքը շատ հռչակուելով՝ Թէյի գոր-ծածութեանը տարածուելուն օգնեց. և այսպէս այն դարուն վերջերը խիստ յաձախած էր Թէյը։ 1840ին հաշիւ եղած է որ տարին 125 միլիոն լտերէ աւելի կը գործածուի Եւրոպիոյ մէջ. բայց ինչուան հիմա շատ աւելցած է։

Ա աձառականութեան մէջ ութը գլխաւոր տեսակ կը բաժնուի Թէյը, որոնց իրեքը կանաչ Ռէյին են, և հինգն ալ Ռխոգոյն Ռէյին[1]։ Նշանաւորներն են. 1. Կայսերական Ռէյը կամ Ռէյի ծաղիկը. 2. Հայդէն կամ Հիսոն Թէյը, որ այս տունկը Եւրոպա բերող հնդիկ վաձա-ռականէ մը անունն առած է. 3. Սին-կլոյ կամ Սանկլոյ, որ մէկալներուն շատին պէս իր մշակուած տեղւոյն անունով կը կոչուի։ Ռխոգոյն Թէյին հինգ տեսակներն են Սոուչոնկ, Սոմլոյ, Գան-կոն, Բէյոյ և Թիսոգոյն Թէյ ըսուած-ները։ Անոնց ամէնն ալ առանձին յատ-կութիւններ ունին, որ ըստ ախորժա-կաց զանազանութեան իրենց յարգը կ'առնուն։

1 Տե՛ս Սաղ։

1 Գիտնալու է որ այդ յեռինը նոյն չէ Ղինաց Թիսոգոյն Թէյ ըսածին հետ։